



«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՄԲ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Իրավասու դիմորդներ	3
2. Ընդունելության գործընթաց	3
3. Ընդունելություն	3
4. Անհրաժեշտ փաստաթղթեր	4
5. Պայմանագիր	5
6. Ֆինանսական օժանդակություն	5
7. Աղբյուրներ	5
8. Հետադարձ կապ	5
9. Հավելված: Առարկայական ընտրություն	6



1. ԻՐԱՎԱՍՈՒ ԴԻՄՈՐՂՆԵՐ

Միջազգային բակալավրիատի դիպլոմային ծրագրի (այսուհետ՝ ՄԲԴ) ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ ընդունելության քննությունների և հարցազրույցների հիման վրա: ՄԲ դիպլոմային ծրագրում սովորելու համար կարող են դիմել:

- 1.1. ՀՀ քաղաքացի հանդիսացող հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ և 11-րդ դասարանն ավարտած սովորողները:
- 1.2. Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող սովորողները՝ ավագ դպրոցի վերջին երկու տարիների կրթական ծրագրի համար:
- 1.3. Այլ դպրոցների ՄԲ Դիպլոմային ծրագրից փոխադրված սովորողները՝ համապատասխան առարկաների ուսումնական ծրագիր նախատեսված լինելու դեպքում Շիրակացու ճեմարանի Դիպլոմային ծրագրում կրթությունը շարունակելու նպատակով:

2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ճեմարանի ՄԲԴ ընդունելությանը մասնակցելու համար դիմորդները պետք է՝

- 2.1. լրացնեն ընդունելության դիմում-հայտը՝ անցնելով [հղումով](#),
- 2.2. գրեն հետաքրքրվածության նամակ (motivation letter),
- 2.3. հանձնեն քննություններ անգլերեն և մաթեմատիկա առարկաներից,
- 2.4. լրացնեն առարկաների ընտրության ձևաթուղթը՝ վերոնշյալ փուլերը հաղթահարելու դեպքում (տե՛ս [այս հղումը](#)),
- 2.5. մասնակցեն հարցազրույցների, որոնք կազմակերպվում են ՄԲԴ-ում իրենց կողմից ուսումնասիրվելիք առարկաների շրջանակներում,
- 2.6. նոր ուսանողները կմասնակցեն նաև ինտելեկտի ընդհանուր զարգացման մակարդակը գնահատող հոգեբանական թեստին:

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

- 3.1. Քննությունները հաջողությամբ հաճնած դիմորդները պետք է հաղթահարեն նվազագույն շեմը (շեմը որոշվում է արդյունքների համեմատության և վերլուծության հիման վրա) և բարձր պատրասվածություն ցուցաբերեն հարցազրույցների ընթացքում: Հատուկ դեպքերում այն ուսանողների համար, ովքեր չեն բավարարել վերոնշյալ պահանջներից որևէ մեկը, հանձնաժողովի որոշմամբ կարող են ընդունվել ՄԲԴ պայմանական կարգավիճակով, թափուր տեղերի առկայության պայմաններում, մեկ կիսամյակ ժամկետով: Կիսամյակային արդյունքների (առաջադիմություն, ՄԲ սովորողի նկարագրին համապատասխանություն) ամփոփման հիման վրա տնօրենության խորհրդի որոշմամբ սովորողը շարունակում է կամ չի շարունակում ուսուցումը ՄԲԴ-ում:



- 3.2. Այլ դպրոցների ՄԲ դիպլոմային ծրագրից փոխադրված (*նոյեմբերի 15-ից ոչ ուշ*) սովորողների համար կազմակերպվում է գիտելիքների ստուգում բոլոր ուսումնասիրվող առարկաներից:
- 3.3. ՄԲԴԾ-ից դուրս մնացած սովորողը, եթե ճեմարանի սան է, թափուր տեղերի առկայության դեպքում տնօրենության խորհրդի որոշմամբ կարող է ուսումը շարունակել ճեմարանի ազգային ծրագրում: Իսկ այլ դպրոցներից ՄԲԴԾ ընդունված և դուրս մնացած սովորողները ճեմարանի ազգային ծրագրով ուսումը շարունակելու համար պետք է հանձնեն ընդունելության քննություններ՝ համաձայն ճեմարանում գործող ընթացիկ ընդունելության կանոնների:
- 3.4. Ցանկության դեպքում ՄԲԴԾ շրջանավարտները, ովքեր ունեն ԶՅ քաղաքացիություն, կարող են ստանալ նաև ԶՅ պետական նմուշի ատեստատ, եթե բավարարեն «Շիրակացու ճեմարան»-ի ընդունելության և ԶՅ պետական ավարտական քննությունների պահանջները:

4. ԱՆՅՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- 4.1. Ճեմարանի սան հանդիսացող դիմորդները պետք է առցանց ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- ❖ Դիմում-հայտ (այն կարող եք լրացնել անցնելով [հետևյալ հղմամբ](#))
 - ❖ Երաշխավորագիր-բնութագիր կրթօջախի երկու աշխատակիցներից (տե՛ս սույն [հղումը](#))
 - ❖ լուսանկար (3x4)
 - ❖ Քննավարձի վճարման կտրոն
Դիմում-հայտերի ընդունման և ընդունելության գործընթացին մասնակցելու համար սահմանվում է 9,600 ՀՀ դրամ միանվագ վճար (քննավարձ), որը վերադարձման ենթակա չէ: Քննավարձից ազատվում են երկկողմանի ծնողագուրկ, զոհված ազատամարտիկների, բազմազավակ (5 և ավելի երեխա ունեցող) ընտանիքների երեխաները, ճեմարանի մանկակրթարանի ավագ խմբի սաները, իսկ այլ դեպքերում Ընդունող հանձնաժողովի որոշմամբ:
- 4.2. Ճեմարանի սան չհանդիսացող դիմորդները պետք է առցանց ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- ❖ Դիմում-հայտ (այն կարող եք լրացնել անցնելով [հետևյալ հղմամբ](#))
 - ❖ Ծննդյան վկայականի կամ անձնագրի պատճեն
 - ❖ Տեղեկանք առաջադիմության մասին կամ «Սանի անձնական գործ»
 - ❖ Հիմնական կրթության վկայական
 - ❖ Երաշխավորագիր-բնութագիր կրթօջախի երկու աշխատակիցներից (տե՛ս սույն [հղումը](#))
 - ❖ Լուսանկար (3x4)
 - ❖ Տեղեկանք բնակավայրից
 - ❖ Տեղեկանք առողջության մասին (ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով)



- ❖ ՀՀ քաղաքացիություն չունեցող դիմորդների դեպքում՝ բժշկական ապահովագրություն ուսումնառության ժամանակահատվածի համար
- ❖ Քննավարձի վճարման կտրոն
Դիմում-հայտերի ընդունման և ընդունելության գործընթացին մասնակցելու համար սահմանվում է 9,600 ՀՀ դրամ միանվագ վճար (քննավարձ), որը վերադարձման ենթակա չէ: Քննավարձից ազատվում են երկկողմանի ծնողագուրկ, զոհված ազատամարտիկների, բազմազավակ (5 և ավելի երեխա ունեցող) ընտանիքների երեխաները, Ճեմարանի մանկակրթարանի ավագ խմբի սաները, իսկ այլ դեպքերում՝ Ընդունող հանձնաժողովի որոշմամբ:

5. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մրցույթով անցած դիմորդների և նրանց ծնողների հետ կնքվում են պայմանագրեր, իսկ Ճեմարանի սովորողների ծնողների հետ՝ գործող պայմանագրերին կից համաձայնագրեր:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մրցույթով անցած Ճեմարանի 10-րդ դասարանից փոխադրված դիմորդներին կարող են տրամադրվել ֆինանսական արտոնյալ պայմաններ.

6.1. հիմք ընդունելով սովորողի 10-րդ դասարանի առաջադիմությունը, ընդունելության արդյունքները,

6.2. ընտանիքի ֆինանսական կարգավիճակը:

Ընդունելությանն առնչվող չնախատեսված բոլոր հարցերը վճռում է տնօրենության խորհուրդը՝ հաշվի առնելով ընդունող հանձնաժողովի առաջարկները:

7. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- ❖ The Diploma Programme; From principles into practice, IBO, 2009
- ❖ The Diploma Programme: Guide to school authorization: Diploma Programme, IBO, updated 2016
- ❖ The Diploma Programme: Assessment Procedures, IBO, 2020

8. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

- ❖ Ընդունելության աշխատանքների համակարգող - բջջ. +374-44-64-01-26
- ❖ Էլ. հասցե: admissionoffice@shirakatsy.am
- ❖ ՄԲԴԾ համակարգող: - annastepanyan@shirakatsy.am



9. ՀԱՎԵԼՎԱԾ. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Առարկայական ընտրության նկարագրություն, ուղեցույց և ձևաթուղթ

Հիմնական առառվանքներ

ԴԾ դիմորդները ընդունելությունից հետո ուսանում են վեց առարկա, որոնք ընտրում են հետևյալ առարկայական խմբերից (որպես կանոն՝ յուրաքանչյուր խմբից ընտրվում է մեկ առարկա սովորելու խորացված մակարդակով (ԽՄ) կամ՝ հենքային մակարդակով (ՀՄ)).

Հիմնական առարկայական խմբերը հետևյալն են.

1. Լեզվի և գրականության առարկայական խմբային ուսուցումներ
2. Օտար լեզու
3. Անհատներ և հասարակություններ
4. Գիտություններ
5. Մաթեմատիկա
6. Արվեստ

Բացի հիմնական առարկաներից, ԴԾ-ի կարևոր մաս են կազմում հետևյալ առանցքային բաղադրիչները՝ **Ընդլայնված Էսսե, Իմացության Տեսություն, Ստեղծարարություն-Գործունեություն-Ծառայություն (արտաուսումնական հասարակական գործունեություն):**

Վերոնշյալ խմբերում առաջարկվող առարկաները ներկայացված են [այս հղումով](#):

Ընտրություն կատարելիս սանը պետք է հաշվի առնի.

- Իր հետաքրքրությունների շրջանակը և թե ինչի՞ն է ինքը լավ տիրապետում
- Ի՞նչ է ցանկանում ուսանել համալսարանում
- Ի՞նչ է պահանջվելու համալսարանում
- Ուսումնառության համար վեց առարկաների ընտրություն կատարելիս սանը ընկալող ենթագիտակցությամբ հետևյալ երկու հնարավորություններից.
- ա) Երկու առարկա՝ հենքային մակարդակով (ՀՄ), չորս առարկա՝ խորացված մակարդակով (ԽՄ),
- բ) Երեք առարկա՝ հենքային մակարդակով (ՀՄ), երեք առարկա՝ խորացված մակարդակով (ԽՄ).
-

Տարբերակ	ՀՄ առարկաների քանակ	ԽՄ առարկաների քանակ
ա	2	4
բ	3	3

ԽՄ-ի բոլոր առարկաները և առանցքային բաղադրիչները ընդգրկված են երկամյա ուսումնառության ողջ ժամանակահատվածում:

ԽՄ և ՀՄ հիմնական տարբերությունն այն է, որ ԽՄ առարկաների բովանդակությունն ավելի ծավալուն է, և դրանք դասավանդվում են ավելի մեծ ժամաքանակով: ԽՄ առարկաները ուսուցանում են 240, իսկ ՀՄ առարկաները՝ 150 ժամ:



ԽՄ առարկներն ընտրելիս սանը պետք է հաշվի առնի իր նախասիրությունները, առարկայի իմացությունը և որ առարկան իրեն անհրաժեշտ կլինի համալսարանում (օրինակ՝ եթե սանը ցանկանում է ուսանել բժշկություն, ապա նա պետք է ընտրի կենսաբանություն առարկան խորացված մակարդակով): Դուք կարող եք լրացնել առարկայական ընտրության ձևաթուղթը [հետևյալ հղումով](#):

Աղբյուրը. Assessment Procedures: Diploma Programme, IBO, 2020